## ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

*Բնության արտածին ուժերի աշխատանք է Հայաստանի Հանրապետության հնագույն բնակավայրերից Հին Խնձորեսկի տեղանքը: Սյունիքի, իր ձևի մեջ յուրօրինակ այս բնակավայրը տարածվում է արևմուտքից արևելք գրեթե 3 կմ երկարությամբ ձգվող լեռնահովտի աջ և ձախ լանջերին: Լեռները կտրտված են խոր ձորահովիտներով, հողաբրգերով և քարանձավներով: Ձորերը միմյանցից բաժանվում են լեռնաբազուկներով, որոնց լանջերին տեղ-տեղ վեր են խոյանում 100 -120 մ բարձրությամբ ժայռեր: Խնձորեսկի բնակիչները դարեր շարունակ հմտորեն օգտագործել են լեռնային բարդ տեղանքը, ինչպես բնակության ու աշխատանքի, այնպես էլ ինքնապաշտպանության համար:*

